



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-17179**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019թ-ի մարտի 13-ի թիվ 59-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/35-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր՝ 749) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

16.10.2017թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում (**այսուհետ նաև՝ Պալատ**) մուտքագրվել է Անուշավան Ղազարյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որի համաձայն՝ իր իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելիս առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ քաղաքացիական դատարանում ինքը պարտվել է, որի պատճառն իր փաստաբանն է՝ Վահագն Մանուկյանը:

Դիմողը նշել է, որ ինքը փաստաբանին վճարել է իր շահերը պաշտպանելու համար, սակայն նա աշխատել է պատասխանողի օգտին: Երբ հանդիպել են, փաստաբանը ծանոթացել է գործի էությանը և հայտարարել, որ ինքն այդպիսի դատեր շատ է շահել, այս մեկն էլ կշահի, այսինքն՝ գործը ստանձնելու պահին նա իրեն երաշխավորել է, որ գործը շահելու է, իսկ իր աշխատանքի համար պահանջել է 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար: Պայմանավորվել են, որ ինքը վճարելու է այդ գումարը, և փաստաբանն անելու է իր գործն՝ առանց Դիմողից լրացուցիչ գումար պահանջելու:

Դիմողի հայտնել է, որ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ վճարելուց որոշ ժամանակ անց Վահագն Մանուկյանն իրեն կանչել և պահանջել է ևս 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ տունը կալանքից հանելու համար դատավորին ԴԱՀԿ ծառայությանը վճարելու համար: Հետագայում Դիմողը պարզել է, որ այդպիսի վճարում գոյություն չունի:

Ըստ Դիմողի՝ յուրաքանչյուր թղթի համար փաստաբանն իրեն կանչել և պարտադրել է լրացուցիչ վճարումներ կատարել, այն դեպքում, երբ ըստ պայմանավորվածության՝ այդ վճարումները պետք է փաստաբանը կատարեր: Դիմողի կողմից ներկայացվել է ըստ իրեն փաստաբանին վճարված գումարի հաշվարկը:

Ըստ Դիմողի՝ ինքը պահանջել է Վահագն Մանուկյանից գրավոր պայմանագիր կազմել, սակայն փաստաբանը հրաժարվել է ասելով՝ « Բանավորը քեզ չի՞ բավարարում»: Մի քանի օր հետո փաստաբանն իրեն մի թուղթ է տվել և պահանջել, որ ստորագրի՝ իր գործը վարելու համար:

Դիմողը նշել է, որ ինքը փաստաբանին մի շարք վճարումներ է կատարել, որոնք, սակայն չպետք է կատարեր՝ հավելելով, որ առաջին ատյանի դատարանում հայցադիմումը մուտքագրելուց հետո մինչև նույն դատարանի կողմից վճռի կայացնելը փաստաբանը միայն մեկ անգամ է մասնակցել դատական նիստի, այն էլ՝ իր խնդրանքով: Ըստ Դիմողի՝ փաստաբանի կողմից ոչ մի փաստաթուղթ, ոչ մի միջնորդություն դատարանին չի ներկայացվել ամբողջ դատական պրոցեսի ընթացքում, մինչդեռ, եթե փաստաբանն իր 85 տարեկան կույր և գիտակցությունը կորցրած մոր առողջական վիճակի վերաբերյալ պոլիկլինիկայից բժշկական փաստաթղթերը պահանջեր և ներկայացներ դատարան, ինքը դատը կշահեր:

Բացի այդ, գործով հակառակորդ կողմը վեճի ընթացքում հայտարարել է, որ Դիմողի փաստաբանին ինքը բավականին լավ է վճարել, որպեսզի նա աշխատի ոչ թե հօգուտ, այլ ի վնաս Դիմողի՝ պաշտպանելով իր շահերը:

Ըստ Դիմողի՝ այդ ժամանակ նա գլխի է ընկել, որ Պատասխանողը երկակի խաղ է խաղում, առաջին ատյանի դատարանի վճիռը վերաքննիչ քաղաքացիական դատարանում չի բողոքարկել, փաստաբանը բողոքն առհասարակ չի ներկայացրել վերաքննիչ դատարան:

Դիմողը նաև նշել է, որ փաստաբանի հետ խոսել է վճիռը վերաքննիչ դատարան բողոքարկելու մասին, ասելով որ վճարել է ևս ծառայության համար և պետական տուրքը, ինչին ի պատասխան փաստաբանը փոստային առաքման անդորրագիր է տվել՝ նշելով, որ դա վերաքննիչ դատարան ուղարկված բողոքի անդորրագիրն է: Սակայն հետագայում Դիմողը փոստային բաժանմունքից պարզել է, որ իր անվանք որևէ դիմում չի ուղարկվել վերաքննիչ դատարան:

Դիմողն անդորրագիրը վերցրել և գնացել է վերաքննիչ քաղաքացիական և վերաքննիչ քրեական դատարաններ, որտեղ նրան ասել են, որ իր անվամբ դիմում չի մուտքագրվել: Այդ ընթացքում լրացել էր առաջին ատյանի դատարանի վճիռը վերաքննիչ դատարան բողոքարկելու ժամկետը:

Դիմողը ստիպված կրկին դիմել է փաստաբանին, տեղեկացրել է, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկելու ժամկետից 2 ամիս անցել է: Վահագն Մանուկյանը Դիմողին ասել է, որ երկու օր հետո գնա իր մոտ, որ ինքը մի նոր դիմում կգրի ու կտա Դիմողին դատարան ուղարկելու համար: 04.08.2017թ. Պատասխանողը Դիմողին տվել է իր ձեռքով գրված ձեռագիր դիմումի տեքստը և ասել է, որ հենց այդպես ձեռագիր վիճակում ուղարկի: Դիմողն անհարմար է զգացել այդպես ուղարկելուց և որոշել է տպել տալ, մոտեցել է մի քանի աշխատողների, որ տեքստը տպեն, սակայն ամեն տեղ մերժել են. ոչ ոք չի կարողացել այդ խզբզոցը կարդալ, որ տեքստը հավաքի: Արդյունքում Դիմողը ստիպված հենց այդպես դիմումը փոստով ուղարկել է դատարան՝ փաստաբանի տված հասցեով: Սակայն, մեկ շաբաթ անց բողոքը վերադարձվել է Դիմողին և պարզվել է,

որ վերաքննիչ քաղաքացիական դատարանի փոխարեն փաստաբանը տվել է վարչական դատարանի հասցեն:

21.08.2017 թվականին վերաքննիչ բողոքն իր կողմից է ուղարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան, սակայն վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վերադարձվել է, ինչից հետո բողոք է ներկայացվել ՀՀ վճռաբեկ դատարան:

Խորհրդի 16.06.2018 թվականի որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանը ենթակվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.1.10, 3.5.5 և 3.8.5(1) ենթակետերի խախտման համար և վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում, իսկ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.2.2, 3.2.5 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը կարճվել է:

Վահագն Մանուկյան 13.08.2018 թվականին (մուտք № 2458-18) դիմում է ներկայացրել Պալատի նախագահին՝ խնդրելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայել պալատի խորհրդի 16.06.2018 թվականի թիվ ԿԳ/100-Ա որոշումը:

Պալատի Խորհրդի 11.09.2018 թվականի թիվ 17/11-Ա որոշմամբ վերացվել է թիվ ԿԳ-17179 կարգապահական գործով « Փաստաբան Վահագն Մանուկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 16.06.2018 թվականի թիվ ԿԳ/100-Ա որոշումը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 17.11.2017թ. թիվ 437-Ա/ԿԳ-17179 որոշման հիման վրա փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագրքի) 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.1.10, 3.2.2, 3.2.5, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

22.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին (այսուհետ նաև՝ Նախապատրաստող):

## **3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Օրենքի 39.5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի նախապատրաստման ընթացքում Դիմողից պահանջվել է բացատրություն, սակայն Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին ներկա են գտնվել Դիմողը և իր կինը՝ Լիլիկ Գասպարյանը:

Խորհրդի նիստի ընթացքում Դիմողը և Լիլիկ Գասպարյանը<sup>1</sup> ըստ էության հաստատել են Դիմումում նշված հանգամանքները:

<sup>1</sup> Նկատի ունենալով, որ Դիմողը ֆիզիկապես չէր կարողանում խոսել կոկորդի հիվանդության պատճառով՝ նրան փոխարեն Խորհրդի նիստում դիմումը ներկայացրել էր դիմողի կինը՝ Լիլիկ Գասպարյանը: Լիլիկ Գասպարյանի հայտնած տեղեկությունների իսկությունը հաստատել է Դիմողը:

Դիմողը Պալատի խորհրդի 04"10"2018 թվականի նիստին ներկայացել և ըստ էության հաստատել է Դիմումում նշված հանգամանքները և նշել է, որ ապացույց չունի, որ Պատասխանողը խոստում է տվել, իսկ երկու կողմերի օգտին աշխատելու փաստի մասին ուղղակի լսել է և որևէ ապացույց չունի:

### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

Օրենքի 39.5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողից պահանջվել է բացատրություն, սակայն Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Պատասխանողը Պալատի խորհրդի 04.10.2018 թվականի նիստին ներկայացել և հայտնել է, որ Դիմողի փաստարկները անհիմն են, հիմնազուրկ հայտարարություններ են, քանի որ ինքը գործի ելքի վերաբերյալ խոստում չի տվել, իսկ ինչ վերաբերում է պայմանագիր չկնքելուն ապա ինքը պայմանագիր կնքել է Դիմողի հետ՝ Աշոտ Պողոսյանի ներկայությամբ, սակայն պայմանագիրը չի ներկայացնում, քանի որ այն գտնվում է իր մեքենայի մեջ և որը ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագրավվել է և տարվել է, այնուհետև՝ վաճառվել է աճուրդով: Պատասխանողը նաև հայտնել է, որ ՍՊԸ-ի կարգավիճակով է հանդես գալիս, իսկ խորհրդի անդամի այն հարցադրմանը, թե՛ ստացված 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը մուտք արել է ընկերության դրամարկղ, վերջինս պատասխանել է, որ այո, իսկ այն հարցին, թե՛ մուտքի անդորրագիր առկա է և կարող է ներկայացնել, վերջինս պատասխանել է, որ այն հանձնել է Դիմողին, իսկ մյուս մասն էլ՝ սնանկության կառավարչի մոտ է:

Պատասխանողը նշել է նաև, որ անձամբ Դիմողի գործի շրջանակներում մինչև հայցադիմումը դատարան ներկայացնելը Դիմողի հետ գնացել է պոլիկնիկաներ, հանդիպել է բժիշկներին, հարցումներ է կատարել և որ հայացդիմումում և դատական նիստի ժամանակ հայտնել է բժշկական փաստաթղթերի մասին, բայց հստակ չի հիշում ներկայացրել է դրանք դատարանին, թե՛ ոչ:

Պատասխանողը նշել է նաև, որ եթե դատաքննությունը եղել է մեկ անգամ, ուստի ինքը հենց այդ մեկ նիստին է մասնակցել, իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ բողոքը ձեռագիր գրելուն, ապա ինքը ծանրաբեռնված է եղել և առողջական խնդիրների պատճառով է ձեռագիր գրել, որպեսզի Վերաքննիչ դատարանը հետ վերադարձնի և ժամկետ կտա տպագրելու համար: Պատասխանողը նաև նշել է, որ վերաքննիչ բողոքն ուղարկելու համար մինչև հունիսի 10-ը ժամանակ է ունեցել, սակայն ծանրաբեռնվածության, առողջական խնդիրների և այլ դատական նիստերի մասնակցության պատճառով բողոքը Վերաքննիչ դատարան ուղարկել է հունիսի 2-ին:

Փաստաբան Վահագն Մանուկյանը նաև նշել է, որ վարչական դատարան է գործը մուտք եղել, քանի որ ինքը տվել է, որպեսզի Դիմողը ուղարկի դատարան, իսկ խորհրդի անդամի այն հարցադրման թե ով է ծրարի վրա հասցեները գրել, փաստաբանը պատասխանեց, որ ինքն է հասցեները գրել ծրարի վրա:

### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

**4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

22.01.2018թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանը կազմել է եզրակացություն, Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 24.01.2018թ.:

խորհրդի նիստերը տեղի են ունեցել 16.06.2018թ. ժամը 12:00-ին, 04.10.2018թ. ժամը 19:30-ին, 09.10.2018թ. ժամը 19:30-ին, 12.12.2018թ. ժամը 18:15-ին, 17.12.2018թ. ժամը 19:30-ին, 27.02.2019թ. ժամը 18:15-ին, 13.03.2019թ. ժամը 18:15-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.***

1. Վահագն Մանուկյանը ստանձնել է Անուշավան Ղազարյանի գործը, որի համար Անուշավան Ղազարյանը վճարել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Դիմողի և պատասխանող փաստաբանի միջև չի կնքվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր:
3. Վահագն Մանուկյանը հայցադիմումը ներկայացրել է վարչական դատարան: Վարչական դատարանը 13.09.2016 թվականի որոշմամբ որոշել է հայցադիմումը վերահասցեագրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին:
4. Պատասխանողը թիվ ՎԴ/5962/05/16 քաղաքացիական գործով նշանակված 4դատական նիստերից ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում մասնակցել է միայն մեկ դատական նիստի, չի ներկայացրել իր պահանջները հիմնավորող ապացույցներ, մասնավորապես՝ Օլգա Ղազարյանի ստացիոնար բուժման մեջ գտնվելու վերաբերյալ:
5. Թիվ ՎԴ/5962/05/16 քաղաքացիական գործով դատական ակտով հաստատված է, որ ներկայացվել է անվավերության պահանջ, սակայն չի նշել անվավերության հիմքեր:
6. Պատասխանողը սահմանված ժամկետում չի բողոքարկել ՎԴ/5962/05/16 քաղաքացիական գործով վճիռը: 21.08.2018 թվականի ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ բաց թողնելու ժամկետը հարգելի համարելու միջնորդությամբ, սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 30.08.2017 թվականին որոշմամբ միջնորդությունը մերժվել է և վերաքննիչ

բողոքը վերադարձվել է՝ օրենքով սահմանված վերաքննիչ բողոք բերելու ժամկետը ավարտված լինելու պատճառաբանությամբ:

7. Փաստաբան Վահագն Մանուկյանը 30.01.2017 թվականին Պալատի Խորհրդի Թիվ թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ մեղավոր է ճանաչվել Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար և նրան նկատմամբ նշանակվել է հիմնական տույժ տուգանք 50.000 ՀՀ դրամ և լրացուցիչ տույժ 8 ժամ վերապատրաստում իր հաշվին: Տույժը մարված չէ:
8. Խորհրդի 16.06.2018 թվականի որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանը ենթակվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.1.10, 3.5.5 և 3.8.5(1) ենթակետերի խախտման համար և վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում, իսկ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.2.2, 3.2.5 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը կարճվել է:
9. Վահագն Մանուկյան 13.08.2018 թվականին (մուտք № 2458-18) դիմում է ներկայացրել Պալատի նախագահին՝ խնդրելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայել պալատի խորհրդի 16.06.2018 թվականի թիվ ԿԳ/100-Ա որոշումը:
10. Պալատի Խորհրդի 11.09.2018 թվականի թիվ 17/11-Ա որոշմամբ որոշվել է թիվ ԿԳ-17179 կարգապահական գործով «Փաստաբան Վահագն Մանուկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 16.06.2018 թվականի թիվ ԿԳ/100-Ա որոշումը վերացնել:

*Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Անուշավան Ղազարյանի Դիմումով, Դիմողի և Պատասխանողի բացատրությամբ, թիվ ՎԴ/5962/05/16 քաղաքացիական գործով 10.05.2017թ. կայացրած վճռով, Վերաքննիչ դատարանի՝ թիվ ՎԴ/5962/05/16 վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ, պայմանագրի գոյության ապացույցի բացակայությամբ պայմանավորված դիմողի ժխտողական պնդումով, Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքով:*

## **6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վահագն Մանուկյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ **13 անգամ** հարուցվել է կարգապահական վարույթ (12 ավարտված վարույթ և 1 ընթացիկ): Այսպես՝

- Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը Խորհրդի 09.09.2015թ. թիվ ԿԳ/86-Ա որոշմամբ կարճվել է.
- Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը Խորհրդի 01.02.2016թ. թիվ ԿԳ/15-Ա որոշմամբ կարճվել է.
- Կանոնագրքի 6.1.1 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 03.06.2016թ. թիվ ԿԳ/73-

Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարվել է:

- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 21.11.2016թ. թիվ ԿԳ/175-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարվել է:
- Կանոնագրքի 3.1.3 և 3.8.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 26.01.2017թ. թիվ ԿԳ/22-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով, տույժը մարվել է:
- Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 30.01.2017թ. թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 50000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ վերապատրաստման դասերի մասնակցություն 8 ժամ ժամաքանակով: Տույժը մարված չէ:
- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 21.12.2017թ. թիվ ԿԳ/129-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով, տույժը մարված չէ:
- Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը Խորհրդի 21.12.2016թ. թիվ ԿԳ/139-Ա որոշմամբ կարճվել է:
- Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 03.04.2018թ. թիվ ԿԳ/57-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 200000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ վերապատրաստման դասերի մասնակցություն 8 ժամ ժամաքանակով:
- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/123-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարված չէ:
- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 06.09.2018թ. թիվ ԿԳ/198-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարված չէ:
- Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 17.12.2017թ. թիվ ԿԳ/223-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարված չէ:

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և**

**3.8.5(1) ենթակետերի խախտման համար, իսկ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.2.2, 3.1.10 և 3.2.5 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պարճառաբանությամբ.**

**7.1. Կանոնագրքի 2.7.2 , 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով.**

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

**Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

**Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝** փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պարճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

**Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխիղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ բարեխիղճորեն, ջանասիրաբար և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխիղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:



Սույն պարագայում Խորհուրդը հաստատված է համարում, որ փաստաբան Վահագն Մանուկյանը թիվ ՎԴ/5962/05/16 քաղաքացիական գործով նշանակված դատական նիստերից ընդհանուր իրավասության առաջին ատյանի **դատարանում մասնակցել է միայն մեկ դատական նիստի**, մինչդեռ Datalex տեղեկատվական կայքում առկա տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ առաջին ատյանի դատարանում **տեղի է ունեցել թվով 4 (չորս) նիստ՝ դատաքննություն:**

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը **չի ներկայացրել իր պահանջները հիմնավորող ապացույցներ**, մասնավորապես՝ Դիմողի 85 տարեկան կույր և գիտակցությունը կորցրած մոր՝ Օլգա Ղազարյանի առողջական վիճակի վերաբերյալ՝ այն դեպքում, երբ վեճի առարկան նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջն էր, իսկ տվյալ ապացույցն էական նշանակություն կարող էր ունենալ վեճի լուծման համար, ինչպես նաև դատարանին **ներկայացրել է անվավերության պահանջ, սակայն չի նշել անվավերության հիմքեր:**

Խորհուրդը հատկանշական է համարում նաև այն հանգամանքը, որ փաստաբան Վահագն Մանուկյանը **հայցադիմումը ներկայացրել է վարչական դատարան, իսկ վերջինս էլ 13.09.2016 թվականի որոշմամբ որոշել է հայցադիմումը վերահասցեագրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին:**

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանը Դիմողին հայտնել է, որ վճիռը բողոքարկել է վերաքննիչ դատարան և փոստային առաքման անդորրագիր է տվել Դիմողին՝ նշելով, որ դա վերաքննիչ դատարան ուղարկված բողոքի անդորրագիրն է: Սակայն հետագայում Դիմողը փոստային բաժանմունքից պարզել է, որ իր անվամբ որևէ դիմում չի ուղարկվել վերաքննիչ դատարան: Այդ ընթացքում լրացել է առաջին ատյանի դատարանի վճիռը վերաքննիչ դատարան բողոքարկելու ժամկետը: Այսինքն, Պատասխանողը Դիմողին հայտնել է, որ օրենքով սահմանված ժամկետում ներկայացրել է վերաքննիչ բողոք, սակայն վերաքննիչ բողոքը նրա կողմից բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, որի պատճառով այն ետ է վերադարձվել և Դիմողը գրկվել է վերաքննիչ ատյանում իր գործը լսվելու հնարավորությունից: Չնայած Խորհրդի նիստում փաստաբան Վահագն Մանուկյանը ներկայացրել է փոստային անդորրագրերի պատճենները, սակայն նշված պատճենների վրա բացակայում է որևէ նույնականացնող տվյալ, որը հնարավորություն կտա նույնացնել, որ դա թիվ ՎԴ/5962/05/16 վերաքննիչ բողոքն է: Մինևնույն ժամանակ Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ առաջին ատյանի կողմից վճիռը հրապարակվել է 10.05.2017 թվականին, իսկ վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը լրանում էր՝ 12.06.2017 թվականին և այդ ընթացքում ըստ Պատասխանողն արդեն գիտեր, որ ծանրաբեռնվածության պատճառով չի հասցնելու պատշաճ բողոք կազմել, սակայն այնուամենայնիվ շարունակել է զբաղվել Դիմողի գործով, մինչդեռ կարող էր և բավարար ժամանակ ուներ հրաժարվել գործից:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նման վարքագիծը վկայում է այն մասին, որ նա պատշաճ բարեխղճություն և ջանասիրություն չի ցուցաբերել իր վստահորդի և նրա գործի նկատմամբ, չի դրսևորել մասնագիտական բավարար ձեռնհասություն՝ կապված իրավունքի համապատասխան ոլորտի հետ, չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն

Մանուկյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտում, ինչի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

### **7.2. Կանոնագրքի 3.1.3 և 3.8.5(1) ենթակետի խախտման մասով.**

**Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝** գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարական գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանալուց երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքեր կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

**Կանոնագրքի 3.8.5(1) ենթակետի համաձայն՝** Վստահորդին կամ պարտավորաբար վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Կանոնագրքի 3.1.3 կանոնի էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարածայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Նշված կանոնի համաձայն գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքման հարցում կամ ցանկանում են փաստաբանի հետ իրենց հարաբերությունները կառուցել՝ առանց իրավական հիմքի, փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի՝ նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց:

Դիմողը Պատասխանողին մեղադրում է նրանում, վերջինս իր հետ երբևէ գրավոր պայմանագիր չի կնքել, իսկ Պատասխանողն իր բացատրությունում հերքում է Դիմողի սույն պնդումը՝ նշելով, որ նման գրավոր պայմանագիր կնքվել է, սակայն որևէ ապացույց, որը կհիմնավորեր իր պնդումը, Պատասխանողը չի ներկայացրել: Նման ապացույց կարող էր լինել, նախևառաջ, հենց այդ գրավոր պայմանագիրը, որը Պատասխանողը Պալատին չի ներկայացրել՝ պատճառաբանելով, որ այն իր մեքենայի մեջ է եղել և որը ԴԱՀԿ ծառայության կողմից բռնագրավվել է և տարվել է, այնուհետև՝ վաճառվել է աճուրդով,

ինչպես նաև նման ապացույց կարող էր լինել նաև գրասենյակի հաշվին փախանցված գումարի մուտքի անդորրագիրը, որը վերջինս չի ներկայացրել՝ պատճառաբանելով, որ այն սնանկության կառավարչի մոտ է:

Հետևաբար, Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը չի ներկայացրել ապացույց, որը կհաստատեր իր կողմից վկայակոչված փաստը, այն է՝ Դիմողի հետ փաստաբանական ծառայությունների գրավոր պայմանագրի կնքումը: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պալատի խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Դիմողի և Պատասխանողի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր չի կնքվել:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Դիմողը վճարել է 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Այսինքն, Պատասխանողը Դիմողին իրավական օգնություն տրամադրելու պարտականությունը ստանձնել են վճարովի հիմունքներով, ուստի պարտավոր էր պայմանագիրը կնքել ողջամիտ ժամկետում՝ հանձնարարությունը փաստացի ստանալուց երկու ամսվա ընթացքում, ինչը չի կատարել:

Կանոնագրքի 3.8.5 (1) կանոնի էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը պարտավոր է վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել: Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը պատշաճ բարեխղճություն և ջանասիրություն չի ցուցաբերել իր վստահորդի և նրա գործի նկատմամբ, չի դրսևորել մասնագիտական բավարար ձեռնհասություն՝ կապված իրավունքի համապատասխան ոլորտի հետ, չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ գործով, որով հաստատվում է, որ նա փաստացի չի կատարել այն աշխատանքը, որը պարտավոր էր կատարել, ուստի և պետք է ետ վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ փաստաբան Վահագն Մանուկյանին բազմաթիվ անգամ հնարավորություն է ընձեռվել վերադարձնել ստացված հոնորարը, սակայն վերջինս այդպես էլ չի կատարել իր պարտականությունը, դեռ ավելին Խորհրդի նիստերը բազմաթիվ անգամ հետաձգվել են հենց փաստաբանի հոնորարը խոստացված ժամկետում չվճարելու հիմքով:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը թույլ է տվել Կանոնագրքի 3.1.3 և 3.8.5(1) ենթակետերի խախտում, ինչի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

### **7.3. Կարգապահական տույժի ընտրությունը.**

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի Խորհրդի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատի Խորհուրդն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ, ինչպես նաև որպես փաստաբանի ազատության և անկախության երաշխիք Պալատի Խորհրդին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում թույլ տալու դեպքում:

Օրենքով Պալատի Խորհրդին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Խորհուրդը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ: Բնականաբար, փաստաբանի վարքագծի որակման գործառույթի շրջանակներում Խորհուրդն արարքի հակաիրավականության աստիճանը ծանրացնող հանգամանքների առկայության պարագայում կարող է այն որակել որպես ակնհայտ կոպիտ:

Մասնավորապես, Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով Խորհուրդը փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվում է համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:

Խորհուրդը նաև հարկ է համարում անդրադառնալ Պատասխանողի պատասխանատվությունն անհատականացնող վերոհիշյալ հանգամանքներին:

### ***Համաչափության սկզբունքը***

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի Խորհուրդը

կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցումը տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել միայն դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:*

**Պալատի խորհուրդը գտնում է, որ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:** Սույն գործի փաստերից, Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ Վահագն Մանուկյանի արարքը կատարված է դիտավորությամբ, այսինքն՝ վերջինս գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանը թույլ է տվել ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում՝ հաշվի է առնելով փաստաբան Վահագն Մանուկյանի թույլ տրված խախտումների վտանգավոր բնույթը՝ վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն չցուցաբերելը, հանձնարարությունների բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելը, այն հանգամանքը, որ փաստաբան Վահագն Մանուկյանը 30.01.2017 թվականին Պալատի Խորհրդի թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ մեղավոր է ճանաչվել Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար և նրա նկատմամբ նշանակվել է հիմնական տույժ՝ տուգանք 50.000 ՀՀ դրամ և լրացուցիչ տույժ՝ 8 ժամ վերապատրաստում (իր հաշվին (տույժը մարված չէ), իսկ Վահագն Մանուկյանի կողմից կարգապահական տույժի ենթարկվելուց՝ **30.01.2017թ.**, հետո մեկ տարվա ընթացքում կրկին թույլ է տվել նույն խախտումը՝ վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել, չի ապահովել հանձնարարությունների բարեխիղճ և ժամանակին կատարումը, որպիսի արարքը **Կանոնագրքի 9.1.2 ենթակետի համաձայն հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում,:**

Նկատի ունենալով վերոնշյալ հիմնավորումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ առկա է Կանոնագրքի 9.1.2 ենթակետում նշված կրկնակիության և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 5-րդ մասում նշված դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքերը, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ անհրաժեշտ է ընտրել **փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում** կարգապահական տույժի տեսակը:

#### **7.4 Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.1.10, 3.2.2 և 3.2.5 ենթակետերի խախտման մասով.**

Անդրադառնալով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.2.2 և 3.2.5 ենթակետերի խախտման հանգամանքին Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կհաստատեն փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից այս ենթակետերի խախտման փաստը:

**Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո**

վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, տվյալ դեպքում Դիմողը:

**Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝** Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պատասխանողի:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.1.10, 3.2.2 և 3.2.5 ենթակետերի խախտման հանգամանքը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն այդ մասով ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.26 կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 30-րդ հոդվածի 5-րդ մասի կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր՝ թիվ 749), ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.8.5(1) ենթակետերի պահանջների խախտման համար:**

**2. Փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր՝ 749) նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում և ուժը կորցրած ճանաչել թիվ 749 արտոնագիրը:**

**3. Փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր՝ 749) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին և 4-րդ կետերի և Կանոնագրքի 3.1.10, 3.2.2 և 3.2.5 ենթակետերի խախտման մասով կարճել:**

**4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան

**13 մարտի 2019թ.**  
**թիվ ԿԳ/35-Ա**  
**ք. Երևան**